

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

() տարաբաղաբայիք գիտնում են ուղղակի
Тифлисс. Редакция „Мусако“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և սոն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միթէ երբէք չենք ապահովացնի:—Ներքին տեսութիւն: Դուրսովինի դործը: Նամակ Ալեքսանդրապոլէ: Նամակ Վ. Արուստիսի: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին լուրեր:—Մշակի: Հեռագրեր:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:

ՄԻԹԵՆԻՔԻ ԶԵՆՔ ԱՊԱՀՈՎԱՅՆԻ

Ութ տարվայ ընթացքում «Մշակը» հասաւ մօտ 1000 բաժանորդի: Այո՛, մօտ հազար բաժանորդ ունենք մենք և դորանով պէտք է գոհ լինենք... Ուրեմն հազարի էլ չը կարողացանք հասնել իսկ եթէ կատարելապէս հազար բաժանորդի էլ հասած լինէինք, այնու ամենայնիւ բաժանորդներից ստացած արդիւնքը չէր ծածկի լրագրի հրատարակման ծախսը:

Ամենքը գիտեն թէ մենք ամեն տարի մեր գրպանից լրագրի դէֆիցիտ ենք ծածկում:

Հայր, որի բնակարանում մէջն է ուրիշին իր համար աշխատեցնել բնական է գտնում որ մարդը իր գրպանից լրագրի ծախս է ծածկում, որ իսկապէս պէտք է պահպանվեր բաժանորդների վրձարքով:

Բայց ոչ մի հայ չէ մտածում, որ հասարակութեան մեծցնող անտարբերութեան դէմ գրեթէ անհնարին է տեղական կերպով գործել ոչ մի հայ չէ մտածում որ մենք ամենքս մահկանացու ենք:

«Մշակի» խմբագիրը, ինչպէս ամեն մարդ, մի անգամ կը մեռնի, յաւիտեան իսկ չի ապրի... Ուրեմն ո՞վ կը ծածկի այն ժամանակ լրագրի դէֆիցիտ, եթէ ինքն հասարակութիւնը, իրանք բաժանորդները չեն ապահովացնում լրագրի նիւթական գրութիւնը իրանց ստորագրութեամբ: Եթէ լրագրի գոյութիւնը կախված է մի անձի նիւթական օժանդակութենից, ուրեմն երբ այն մարդը էլ չի լինի, լրագիրն էլ կը դադարի, որովհետեւ նիւթական միջոց չի ունենայ շարունակել իր գոյութիւնը:

Հարմանակի երևոյթ: Ամեն ազգի մէջ լրագիրը հասարակութեան համար է հարկաւոր, իսկ հայերի մէջ նա միայն իրան խրմբագրին է հարկաւոր, աւելի ոչ չէր. դա մասնաւոր մարդու կապրիզ է... «Մեզ համար լրագիր ի՞նչ հարկաւոր է, ասում է ազգը, մենք այնպէս էլ կարող ենք ապրել... միթէ չէ կարելի տրգէտ, անդրադէտ, անշարժ մնալով այնու ամենայնիւ լաւ ապրել ուտել խմել պահպանել երեխաներ ունենալ, վաճառականութեամբ պարապել խաբել հարստահարել և հարստանալ...»

Այդպիսով լրագիրը երբէք չի դառնայ հայերի մէջ մի հաստատ, տեղական հիմնարկութիւն, այլ գոյութիւն կունենայ, բանի որ ապրում է լրագրի հիմնողը, իսկ նրա մահից յետոյ ի հարկէ կուչնչանայ:

Մեզ ինչ թող ոչնչանայ, ասում է հայը, այն հայը, որին օտարազգիները անուանում են խելք ժողովուրդ, ուսումնասէր ազգութիւն... Պէտք է ասել որ հայը մեծ շնորհ ունի իր երեսին զանազան դիմանկեր ծածկել և օտարներին խաբել իր մասին աւելի բարձր գաղափար օտար երկիրներում կազմել տալու համար...

Ի հարկէ դառն է թվում ձեզ սիրելի հայրենակիցներ, երբ ձեր երեսին ճշմարտութիւն են ասում... Ձեզ ի հարկէ, աւելի հաճելի է, երբ ձեր մասին ասում են, թէ երեւելի ժողովուրդ է.բ... Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՈՒԹՐՈՎԻՆԻ ԳՈՐԾԸ

Նովեմբրի նահանգական ժամադրմի վարչութեան ազիւտանտ շտաբ-կապիտան Բօմանովին, 1878 թւի դեկտեմբերի 16-ին, գեկուցում է կազմել այն մասին, թէ երբ նա, մի և նոյն օրը 2 1/2 ժամին, վերցնելով իր հետ զինուորական պատգամաւոր Վիլմանս-տրանդսի 86-րորդ հետեակ գնդի մայր Բիլիօվսկուն, գնաց մի և նոյն գնդի պողպո-

րուշիկ Դուբրովնի բնակարանը, այնտեղ խուզարկութիւն անելու զիտաւորութեամբ. հայր թէ այս վերջինը յայտնել էր իր այցելութեան նպատակը, երբ պողպորուշիկ Դուբրովնի յանկարծ, հանելով արկղից ռէվոլվերը, բռնեց ճիշդ նրա ուղղութեամբ, և արձակեց նրա վրա, բայց ոչինչ վնաս չը պատճառեց նրան, որովհետեւ այս վերջինը յաջողաբար յետ մղել ռէվոլվերը և գնտակը խրովեցաւ տան առաստաղին: Յետոյ նրա և Դուբրովնի մէջ պատահած կռիւ ժամանակ վերջինս աշխատեց ռէվոլվերի հարուածը երկրորդել, բայց այդ միջոցին կօրիգօրի մէջ գտնված Ֆիլիպով, Կուխտով և Ալէկսեյով ժամադրմի ունեւոր-օֆիցերները օգնութիւն հասան, և դրանց բոլորի ջանքերով նրանց յաջողեց Դուբրովնից խլել ռէվոլվերը: Սրանից յետոյ, Դուբրովնի մտաւ հետեակ սենեակը, և վերցնելով պահարանից մի խանձալ, սկսեց նրանով պաշտպանվել, այդ պաշտպանութեան միջոցին, նա բաւական վտանգաւոր կերպով վերադարձեց ունեւոր-օֆիցեր Բիլիպովի երկու ձեռքերը, և միայն երկար կռից յետոյ կարողացան նրան զինաթափ անել:

Երբ մեղադրվածը բոլոր նրա մասին եղած խուզարկութիւնների ժամանակ հրաժարվեց որ և է բացատրութիւն տալու, բայց ներկայ տարվայ յունվանի 16-ին նա խնդրեց դատաստանական քննիչին, որ թող տան նրան բողոքել իր անիրաւացի բանտարկութեան մասին, և թողյուրութիւն ստանալով, նա իր սեփական ձեռքերով գրած մի խնդրեց ներկայացրեց, որի հետ կցած էր և այն գործը, որ վերաբերում էր Դուբրովնի այն վարմունքին, որ յունվարի 29-ին եղած քննութեամբ երեւաց, թէ նա վիրաւորել էր ինքն իրան բանտով ուսի երակներից մէկը. այդ բանը առիթ տուեց քննիչին կասկածելու թէ մի զույգ մեղադրվածը խելացիոր լինի, բայց սրանից յետոյ Դուբրովնի առողջ ժամանակ կատարված զննողութեամբ, մասնադէտաւոր սիլիսիա տր բժիշկներ Ալիպիսով և դօկտօր Դենիսով հասան այն եզրակացութեան, որ մեղադրվածը ոչինչ հոգեկան հիւանդութիւն չէ ունեցել, և թէ ներկայումս էլ նա հոգեպէս առողջ է:

Պաշտօնից հրաժարեցրած Պետրեւորդի նահանգի առեւտրական կանդիդատի որդի 24-ամեայ պողպորուշիկ Վլադիմիր Դուբրովնի 1877 թւի յունվարի 30-ին կամաւոր ծառայութիւն մտաւ, 1878-ի մարտի 20-ին նա պողպորուշիկի աստիճան ստացաւ և նոյն թւի դեկտեմբերի 30-ին Բարձրագոյն հրամանով հրաժարեցրած է պաշտօնից. դատաստանի չէ նիւթարկված:

Երբ դատաստանական նիստը սկսվեց, նա խաղաչի կարգադրութեամբ մեղադրված Դուբրովնի պահապանի ուղեկցութեամբ վերաբերուն ուսերին դրած, և զիւսարին էլ զիւսին մտաւ դատարանի դահլիճը և ուղեւորվեց դէպի այն կողմը, որ նշանակված է մեղապարանների համար: Օրապահ օֆիցերը պահանջեց, որ նա զիւսարի վերցնի, այս վերջինը հոնեց զբլիւսարի, և սկսեց զլուխը այս կողմ ու այն կողմ դարձնել, և իր հայեացքը ձգելով ամբոսի վրա, ուշադրութիւն չէր դարձնում նախազանի խօսքերին, որ հրաւիրում էր նրան ատենի կողմը դառնալ և վերջապէս բղաւելով. «Այս ինչ է», թուաւ մեղադրված-

ների նստարանի վրա, և փորձ փորձեց վանդակի վրայով թռչել, և մի ոտքն արդէն դուրս էր դրել, երբ պահապանը նրան արգելեց, այնուհետեւ նա սկսեց սուտ մոնչալ աշխատելով պահապանների ձեռքից դուրս փախչել, սրանից յետոյ նախազանի հրամանով նրան դահլիճից դուրս տարան, և դահլիճի մինչև բանտարկանների սենեակը նա շարունակ մոնչաւ էր: Մեղադրվածի այսպիսի վարմունքից յետոյ, նախազան յայտնեց, որ նիստը փոքր ինչ կը դադարի, և հինգ րօպէ դադարումից յետոյ, երբ ատենապետները վերադարձան դատարանի դահլիճը, յայտնեցին, թէ գործից երևում է, որ քննութեան ժամանակ, Դուբրովնի խելացիութեան մասին առաջացած կասկածների առիթով, նրան երկու անգամ բժշկական հետազոտութեան ենթարկեցին, սակայն պսիխիատր բժիշկները նրա մէջ ոչինչ խելացիութեան նշաններ չը նկատեցին, և նրան հոգեպէս առողջ գտան. այս պատճառով էլ դատաստանը Դուբրովնի այս վարմունքը վերաբերելով դատաստանի մէջ կատարած անկարգութեան, որոշեց շարունակել գործը առանց նրա ներկայութեան:

Վկաների հարց ու փորձի ժամանակ բացեցին այն բեռը, որի մէջ պարունակված էին նիւթական առարկաների ապացոյցներ. նրա մէջ էին գտնվում այն մեծ կալիբրով Սմիա և Վէսսօնի սիստեմայով ռէվոլվերները, որ խլել էին մեղադրվածի ձեռքից նրա կախնաւորութեան միջոցին, և նոյն իսկ պողպատե խանձալը, միանման դատաւանդ, որով նա վիրաւորեց իրան կախնաւորող ժամադրմեներին. բացի այդ, այնտեղ գտնվում էր և մի կէս արշինից աւելի երկայնութեամբ դանակ, մի այնպիսի դատաւանդ, որ յարմարեցրած էր փոքրացնել կամ մեծացնել դանակի երկայնութիւնը. այդ դանակի պողպատե բռնատեղի մի կողմը փորված էր—աշխատիք և միւս կողմը—պաշտպանվելու խօսքերը: Բայց այս վերոյիշեալ բեռի մէջ գտնվում էին չուգունից ածուխի մի կատետ, բոլոր վերոյիշեալ զէնքերի համար փաթեթներ (ԳԱՅՈՒՄ) և ռէվոլվերի պատրօններ: Նիւթական ապացոյցները ցոյց տուին ինչպէս շտաբ-կապիտան Բօմանովսկուն, նոյնպէս և մեղադրվածի կախնաւորութեան ներկայ գտնվող երեք ժամադրմի ունեւոր-օֆիցերներին, որից յետոյ վերաբերելով վկաները հաստատեցին, որ դրանք նոյն իսկ ռէվոլվերն և խանձան էին, որոնցով զինված էր Դուբրովնի իր կախնաւորութեան միջոցին: Վիւղացի Նիքիթովսկուն, նիւթական ապացոյցները տեսնելուց յետոյ, ասաց, որ այդ նոյն իսկ ռէվոլվերը և խանձանն էր, որոնց նա տեսել է Դուբրովնի տանը, իսկ ինչ կը վերաբերի դանակին, նա ասաց, որ նրան յայտնի չէ, դա եղել է մեղադրվածի մօտ, թէ ոչ:

Վկաների հարց ու փորձը վերջնապէս յետոյ, զինուորական պրօկուրօրի պաշտօնաւորը յայտնեց, որ նա անհրաժեշտ է համարում մեղադրվածի ներկայութիւնը, եթէ միայն նա հանգստացել է, որպէս զի նրան յայտնվի այն ինչ որ կատարվեցաւ նրա բացակայութեան ժամանակ: Նախազանի հրամանով օրապահ օֆիցերը դնաց մեղադրվածի մօտ կատարելու նշանակված հրամանը, և վերադառնալով դատարանի դահլիճը, յայտնեց ատենին, որ մեղադրվածը հանգստացել է,

բայց չը նայելով նրա երրակի առաջարկու-
թեանը թէ արդեօք չի ցանկանայ նա մանկ
դատարանի դահլիճը գործը լսելու, —նա ու-
չինչ չը պատասխանեց: Սրանից յետոյ դա-
տաստանը շարունակեց գործը մեղադրվածի
բացակայութեամբ:

Այնուհետեւ կարգադրեցան հետեւեալ դո-
կումէնտները. 1) Գաղութաւոր մեղադրվածի
սեփական ձեռքով գրած տեղեւոր, վերնա-
գիրն է. «1878 թւին ուսումնարանի գոյող
օժիցիներէրի նկատողութիւնները. դա գրված
է հետեւեալ բովանդակութեամբ. չորեքշաբ-
թի, 1878 թւի դեկտեմբերի 6-ին: Նամակ
ուսումնարանի օսոյալականներին: Մերնը-
կատողութիւններն նկատուին այն է, որ հա-
ղորդիք յեղափոխիչ օսոյալականներին մի-
քանի տեղեկութիւններ, որոնք, մեր կարծի-
քով, անհրաժեշտ են ժողովրդական թշնա-
մական ցուցմունքներ անելու և զանազան
բաշխ-բուժող պոլիցիականներին զննելով ընդ-
դիմադրելու համար, և ընդհանրապէս բո-
լոր այն գործողութիւններին համար, որոնց
յեղափոխիչ օսոյալականներին հարկ կը լի-
նի դիմել իրանց յեղափոխիչ (бунтарство)
մտքերի իրագործման համար: Ուսումնարան
լականը, դժբաղդապէս չունի այն յեղափո-
խական տեղեկութիւնները, որ ունեն ու-
րիշ երկրներ յեղափոխականները: Քանի ան-
գամ արդարացի էր Կովկասու ասածը, թէ...
(Թողված տեղ բնագրի մէջ): Անշուշտ սրա
պատճառը պէտք է որոնել այն միջոց և բխ-
մանութեան աստիճան անշարժ և զգուշի
միջոցորտին, որի մէջ ապրում ենք թէ մենք,
թէ մեր հայրերը և թէ մեր պապերը: Արեւ-
մուտքում, մանաւանդ այնպիսի երկրներում
ինչպէս Պրանսիան, Իտալիան և Սպանիան են,
ուր մանուկ հասակից պէտք է եղել խանջալ
ու թէվոլէր գործ ածել, ուր հարկ է եղել
կրթվել յեղափոխական կռիւների դրօշակ յուզ-
մունքների մէջ, ուր գրեթէ ամեն օր մարդս
հանդիսատես ու մանակից է եղել աղմկալի
ցուցմունքներին և ուր մարդիկ տեսել են թէ
ինչպէս նրանց հայրերն ու եղբայրները մարտ-
լիէզի հօգը հնչելով, մեռել են զիւրազանարար
բարձր կազմէրի վրա, պաշտպանելով մարդ-
կութեան ազատութեան սրբազան իրաւունք-
ները: Հարկաւ, այս բոլորը չէր կարող չար-
տայալովել բոմանական ազգերի բնաւորու-
թեան և նրանց գործելու եղանակի վրա:
Նրանք, ինչպէս յայտնի է, միջազգային խոռ-
վութեան առաջին կարապետներն եղան, և
մինչդեռ հեղաբարոյ գերմանացիք, գարեջուր
խմելով, բաւականանում էին խաղաղ պրո-
պագանդայով, և մինչդեռ նրանք ձգձգում
էին պարլամենտական ազդեցիկները, նրանք,
յեղափոխութեան այս եռանդուն ասները
կանչում էին ժողովրդին ապստամբութեան և
զէնքով ընդդիմադրութեան:»

Այնուհետեւ: Մենք գիտեմ ենք դարձեալ
մեր ուսումնարանի սիրելի ընկերներին,
խնդրելով նրանց և առաջարկելով, յօգուտ
նոյն իսկ սուրբ գործին, որին մենք ծառա-
յում ենք, լաւ գէշեր ունենալ և սովորել
կարելի եղածին չափ յաջող կերպով բա-
նայնել նրանց: Պարոններ, ձեզ յայտնի է, որ
շատ յեղափոխական նշանաւոր ձեռնարկու-
թիւններ չը յաջողեցան, և այդ բանը միայն
յառաջացաւ տղիտութենից, աններելի անդ-
գուշութենից, անհեռաւորութենից և շատ
այսպիսի պատճառներից: Ձեզ յայտնի է, որ
երբ Նպօլիտ Միշկին ժանդարմի օժիցիների
համազգեստով գնաց Ն. Գ. Ձերնիշիւսկուն
ազատելու, ակաէլբան տերը փոխանակ աջ
ուսի վրա հագնելու, նա նրանց ձախ ուսի
վրա էր հագնել, գրանով կախածել տուեց
Վիլիցի պահապանին:

Ձափազանց տխուր հետեւանքներ ստաց-
վեցան, և որ գլխաւորն է այդ հետեւանք-
ները անուղղելի էին: Իվան Մարտինովիչ Կո-
վալսկին (որ 1878 թւին օգոստոսի 2-ին 0-
զէսայի մօտ հրացանաձիգ էր արած), մի քա-

նի տարի կրելով Արամ-Նինի սխտէմայի թէ-
վովէրը, չը կարողացաւ իմանալ, որ այդ սխ-
տէման բանի պէտքը չէ. յայտնի բան է, թէ-
վովէրը չը բացվեց, և անպիտան Կորբոզէի
(չառաւ կապիտան) ողջ մնաց: Վերա Նվա-
նովնա Ձատուլիչ նոյնպէս զուր ընտրեց մի-
ջակ մեծութեան Բուլբոգ սխտէման: Տիկին
Ֆէօդորովա նոյնպէս այս սխտէմայով թէվովէ-
րից դրեց, և դորանով բացատրվում է, թէ
նա չը կարողացաւ փշրել օժիցիներ-մարդերի
ամբողջ դատարկը: Մեր բատալիօնները այն-
պէս փոքրաթիւ են, իսկ մեր թշնամիները
այնպէս զօրեղ են, որ մենք բարոյապէս պար-
տաւոր ենք գործ դնել ամեն մեր ձեռքից
եկած միջոցները որպէս զի կարողանանք յա-
ջողութեամբ մղել դործական կռիւը այն-
տեղ, ուր նա անհրաժեշտ կը լինի: Նիթէ
մեր սիրելի օսոյալական ընկերներին հարկ
կը լինի մեռնել, այն ժամանակ թող նրանք
մեռնեն կարելի եղածին չափ շատ կորուստ
պատճառելով մեր անդուծ, վայրենի և կո-
պիտ թշնամիներին: և 2) այն գործը, որի
մէջ գրված է ուսուցիչ-օժիցիներ Գիլիպովի
վերքերի բժշկական գննողութիւնը, որի բո-
վանդակութիւնը մանրամասնաբար պատմված
է մեղադրական գործի (акт) մէջ:

Ձիւղուրական պրօկուրօրի պաշտօնավարը,
իր ձառի մէջ ցրց տալով այսպիսի յանցանքի-
ծանր նշանակութիւնը, որը գործել է մեղա-
դրված Կորբոզի կարծում է, որ մեղադր-
վածի գործած յանցանքը պատկանում է այն
յանցանքներին, որոնք յիշված են Բարձրագոյն
ուկազի մէջ, որ տրված է սենատին 1878
թւի օգոստոսի 9-ին, և որը հրատարակված
է նոյն թւի զինուորական տեղեկութիւնների
հրամանի մէջ օգոստոսի 10-ին № 246, ուր
նշանակված է պատժի 279 յօդուածը:

Ուզիլով մի ժամ տեղը գաղաւթների խոր-
հրդից յետոյ զինուորական ատենադ զուրս
բերեց մեղադրվածի դատավճիռը, որով նա
մեղադարար է ճանաչվում այն բանի մէջ, որ
նա զէնքով ընդդիմադրութիւն է գործել այն
իշխանութեանը, որ նշանակված է եղել կա-
ռավարութենից, որ նա աշխատել է սպանել
օժիցիներին և վերաւորել է այն ուսուցիչ-օժի-
ցիներին, որ կատարելիս է եղել իր ծառայու-
թեան պարտականութիւնը, որից յետոյ դա-
տաստանը տեսաւ, որ նա անկասկած պատ-
կանում է գաղտնի չարագործ ընկերու-
թեանը, սրա համար, դատաստանը, Բարձ-
րագոյն ուկազի հիման վրա, որը տրված
է սենատին 1878 թւի օգոստոսի 9-ին, և
որը հրատարակված է զինուորական տեղե-
կութեան հրամանի մէջ նոյն օգոստոսի 10-ին
№ 226 և 279 յօդ. զինուորական 1875
թւի ուստավի, վճռեց. հրաժարեցրած պող-
պօրուչի Վլադիմիր Գուբոօվին զրկելով
բոլոր իրաւունքներից, ներթափել նրան մա-
հուան, կախաղանով: Այս դատավճիռը ի-
րագործելուց առաջ ներկայացնել զվարդիա-
կան գօրքի և Պետերբուրգի պատերազմական
չըմանի գլխաւոր հրամանատարի հաստատու-
թեանը:

(Правительственный Вѣстникъ)

ՆԱՄՍԱ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎՈՒՅՑ

29 ապրիլի

Այս տարի Ալեքսանդրապօլը անցեալ տա-
րուան հակառակ տիպին է ներկայացնում իր կը-
լիմայով և իր ուսումնական շըմանով: Որովհե-
տե անցեալ տարի գարնան սկզբից մինչև մայի-
սի վերջերը անդադար օր և գիշեր համա-
րեա, անձրեւ էր գալիս և փողոցները անանցա-
նելի ցեղի ովկիանոս էին դարձել, իսկ ընդհա-
կառակը այս տարի մինչև այսօր տակաւին ոչ
մի անգամ անձրեւ չէ եկել. (ի մեծ փաստ Ալեք-
սանդրապօլի և շըմակայից բուսականութեան):
Կարծես ամպերն էլ ծիծաղում են մեզ վրա,
որովհետեւ իւրաքանչիւր օր գունդագունդ գալիս

հաւաքվում են գլխներին և դարձեալ առանց
անձրեւելու անհետանում: Ալեքսանդրապօլից
յոյսը մնացել է «Նօթի վերաց» սուրբ Լստուա-
ծածնի հրաշագործ պատկերի վրա: Այդ պատ-
ճառով մատաղ ներս անելու պատրաստութիւն
են տեսնում, որ յառաջիկայ կիրակի օրը, ըստ
սովորութեան, պատկերը եկեղեցական հանդիսով
վերառած գնան դաշտը անձրեւի համար թափօր
անելու:

Ինչ որ վերաբերում է ուսումնական շըմանին,
արդէն ընթերցողը «Մշակի» թղթակցութիւն-
ներից տեսնում է, որ սրա հորիզոնն էլ սե ամ-
պերով է ծածկված. այստեղ ուսումնական
շըմանում գործողների մէջ երկպառակութիւն
է ծագած. (այս էլ ի մեծ փաստ ուսումնարանի
առաջադիմութեան): Շճմարիտ պէտք է ասած,
որ երկպառակութեան պատճառը ինքն ըստ ին-
քեան ոչինչ բան է, բայց մեր պ. պ. ուսու-
ցիչները անխոհեմաբար գործը ծայրայեղու-
թեան հասցրին:

Լրդէն ամեն ոք գիտէ, որ այդ երկպառա-
կութեան պատճառը «Մշակի» № 33, Ալեք-
սանդրապօլից գրած նամակն էր: Բայց մի թէ
կարելի է մի այդպիսի թղթակցութեան համար
այդքան մեծ աղմուկ բարձրացնել և մէջ տեղը
մի քանի անձանց պատիւ շօշափել: Լրդարեւ կան
այնպիսիք, որոնք արժանի են արհամարհանաց
և կան այնպիսիք էլ, որոց հետ և մեր բազ-
մաշխատ յաջորդը, բոլորովին ի դուր անմեղ
բամբասանաց և զրպարտութեանց առարկայ են
դարձած: Թէպէտ նոյն թղթակցութեան մէջ
կային այնպիսի կէտեր, որոնք զուտ ճշմար-
տութիւններ էին և կային այնպիսի կէտեր էլ,
որոնք զրպարտանք, բայց սուտը աւելի էր,
քան ճշմարտը:

Ինչ և իցէ դարձեալ ասում ենք, որ այդ
ընթացքը մեր ուսուցիչներին պատիւ չը բե-
րեց: Ոչ մէկ և ոչ միւս կողմը չը շահեցան
այդ խոռոչութիւնից, այլ ընդհակառակն երկու
կողմէ էլ ենթարկվեցան հասարակութեան եր-
կար և կարճ դատողութեան:

Այս իրողութիւնը եթէ լաւ քննենք, ուսու-
ցիչները այնքան մեղաւոր չեն, որքան մի քանի
կողմակի պարոններ, որոնք անսխալականութիւն
են քարոզում, այն ինչ իրանք ոտից գլուխ...
խորասուզված են այդ տղմի մէջ: Թող հա-
սկանան աղբի մշակները, որ իրանք այդպի-
սիների կամայականութեան են զոհ գնում:

Այն պարոնները, որոնք արդէն արժանա-
ցել էին հասարակութեան համակրութեանը,
մասամբ զարկ տուին, իրանց բռնած ընթացքով,
իրանց շահած արժանաւորութեանը: Իսկ այն
պարոնները, որոնք դեռ ևս նոր շըմանի մէջ
մտնելով, պէտք է ստանային հասարակութեան
համակրութիւնը պակսեցան լիբը, անամօթ և
անդամ ածականներով: Ուրեմն, թէ ինչ շահ-
վեցան այդ պարոնները իրանց արածից, այդ
մասին թող իրանք մտածեն:

Սենք միայն կասենք, որ պէտք էր բանը
չափազանցութեան հասցնել, այլ աւելի լաւ կը
լինէր, որ զարգացած և փորձառու կողմը զե-
ղաբար վարվէր, մինչդեռ հաստատապէս չը
գիտէր թէ ու յօգուածագիրը, իսկ միւս կող-
մը, թէ և որքան էլ անմեղ լինէր, այնու ամե-
նայնիս իրան չը պէտք է թող տար այդքան
մեծ խռովութեան պատճառ դառնալու, աչքի
առաջ ունենալով թէ իր և թէ ուսումնարանի
օգուտը:

Բայց այստեղ ակամայ հարց է առաջ գալիս:
—Պարոններ ուսուցիչներ, խեղճ ուսումնարանը
ձեզ ինչ է արել, որ ամենքդ մի կողմից կամե-
նում էք քացի տալ. (խօսքս նրանց համար է,
որոնք այդ կերպ են աշխատում): Բայց չէ՞ որ
ուսումնարանը հայ մանկանց դաստառն է և
ոչ վարձապիտան խռովութեան բուն, ուր հա-
ւաքվում է և իրար ետեւից ձաւար հա-
ւաքում: Լաւ մտածեցէք, կը գայ մի օր, երբ
այդ տան տէրը կը զարթնի և ձեզանից հաշեւ
կը պահանջէ ու իր տանը փաստողներին անպա-
տիժ չի թողնի: Գուրբ չը կարծէք թէ այդ
տունը անտէր է և ոչ ոք ձեր արածների վրա
ուշադրութիւն չի դարձնի: Ոչ, ոչ, եթէ այդ-
պէս է, դուք սխալվում էք: Այդ տան տէրը
մի անհատ չէ, դրա բացարձակ տէրը աղքատ է,
որին դուք չէք կարող ոչ մի կերպ պատասխա-
նել: Մի թէ չէք լսել այն գեղեցիկ խօսքը
թէ՝ «ամեն գործդ խոհեմութեամբ գործէ ու

միշտ վերջը մտածէ»... ուրեմն, պարոններ
դուք էլ խոհեմութեամբ գործեցէք ու միշտ
վերջը մտածեցէք:

Այս այս է մեր համեստ կարծիքը այդ մա-
սին: Իս ոչ երկու ասող եմ և ոչ երեք, այլ
մի հասարակ և պարզ քաղաքացի: Ով ինչ ունի
սանելու թող ասէ:

Ա. Մ.

ՆԱՄՍԱ ՎԵՐԻՆԱՎՈՒԽՈՒՅՑ

26 ապրիլի

Առաջիկայ մայիս ամսում, որքան ես յիշում
եմ, պէտք է կայանայ մեր երկսեռ ուսումնա-
րանների հոգաբարձական ընտրութիւնը: Աչքի
առաջ ունենալով մեր ուսումնարանների ներկայ
անմիթար և ցաւալի վիճակը, աչքի առաջ ու-
նենալով ուսուցիչների (բացառութեամբ) իրանց
պաշտօնի մէջ ցրց սուտած անբարեխղճութիւնը
և վերջապէս հոգաբարձուաց անգործունէութիւ-
նը, թէ ինչ ձեռք են նրանք վերաբերվել և
վերաբերվում դէպի ուսումնարանական գործը,
ես հարկաւոր եմ համարում ներկայ տարվայ
հոգաբարձական ընտրութեան մասին դարձնել
մեր Ազուլիսի հասարակութեան ուշադրութիւնը
այդ գլխաւոր հարցի վրա, որ մի շատ կարևոր
է նշանաւոր ենդիր է մեզ համար:

Ինչպէս ասացի հոգաբարձական ընտրութեան
հարցը մի շատ կարևոր է նշանաւոր ինդիր է
մեզ համար: Սրան վճիռ տալու համար հար-
կաւոր է նաեւ յիշել անցեալը և ապա օգուտ
բաղել, դառ առնել փորձից: Յիշելով անցեալը
մենք կը հասնենք այն անմիթարական և դառն
հետեւանքին, որի գլխաւոր պատճառը, իմ կար-
ծիքով, այն է, որ մեր մինչև այժմ եղած հոգա-
բարձուները կամ անընդունակ են եղել իրանց
պաշտօնը վարելու, և կամ ծանրաբեռնված լի-
նելով զանազան թէ անձնական և թէ առևտրա-
կան գործերով, ժամանակ և միջոց չեն ունեցել
ուսումնարաններին հսկելու: Գաղտնի օգուտ քա-
ղելով մենք կը տեսնենք, որ ինչ ուսումնարա-
նում որ եղել են երիտասարդ հոգաբարձուք,
մի խօսքով ասած, գործունէայ, աշխատասէր և
ժրջան երիտասարդ—հոգաբարձուք, այնտեղ
թէ առաջադիմութիւնը, թէ նիւթական և թէ
բարոյական օգուտը միշտ զգալի կերպով առաջ
են գնացել: Դա ինչու չէ, չէնք չէնք: Զենց
անցեալներին «Մշակի» համարներում ես կար-
գացի, (չեմ յիշում ինչ տեղերից) յօդուածներ,
որոնք ճշմարտացեւոր էին իմ խօսքերը—թէ
մեր երիտասարդ հոգաբարձուքը շատ գործու-
նէայ և միաբան են և մեծ օգուտներ են բերում
ուսումնարանին և այլն և այլն...

Այնպիսի հարցերում, ինչպիսին հոգաբար-
ձական ընտրութեան հարցն է, պէտք է վարվել
խոհեմութեամբ և վերին աստիճանի զգուշու-
թեամբ: Ընտրութեան ժամանակ, որքան ես
եղբակցանում եմ, պէտք է գլխաւորապէս աշխա-
տել մեկ գաղափարի և մեկ ուղղութեան պատ-
կանող մարդկանց ընտրել, այլ ոչ ինչպէս մինչև
այժմ արել ենք: Հոգաբարձական խումբը, իմ
կարծիքով, հարկաւոր է ընտրել երիտասարդ-
ներից, գործունէայ և անձնատուր երիտասարդ-
ներից միայն, եթէ ոչ ամբողջապէս (չորսը) գո-
նեա մասնաւորապէս, մեկը կամ երկուսը:

Թող փորձէ Ազուլիսի հասարակութիւնը
այս տարի միայն գոնեա յանձնել մեր ուսումնա-
րանները երիտասարդ հոգաբարձուների ձեռքը,
և ես համոզված եմ, որ նա երբեք չի զղջայ
իր արածի վրա:

Ե. Տէր-Մկրտչեանց

ՆԱՄՍԱ ԽՈՐԱԳՐԻՆ

Թէթի, 15 ապրիլի

Այս օրերս պատահեց ինձ գնալ Թէթի, հե-
տաբարբի լինելով, թէ արդեօք հոգաբար-
ձութիւնը ուշադրութիւն է դարձնում հասարա-
կութեան ձայնին թէ ոչ: Լրդարեւ սկսել էին
սենեակները կարգի բերել, մոմալաւաւ և մա-
տենապետ աւելորդ մարդիկը հեռացրած էին և
եկեղեցական կրպակը կապալաւ տուել էին աշ-

խոյժ երեսասարգներին: Անցի որ նրանք պատ-
րաստում են ճանապարհի համար մշտական եր-
թեկեկ կառքեր փոքր գնեցող: Հափաղանց ու-
րախացայ:

Բայց մի փոփոխութիւն տեսայ քահանաների
մէջ. հարցրեցի առաջվայ քահանայի փոփոխութե-
պատճառը, որի հետ ծանօթացայ առաջին անգամ
եղած ժամանակս և որը բաւական հասկացող և նոր
մարդ էր, — ասացին որ հոգաբարձութիւնը արաւ-
այս փոփոխութիւնը: Եւ շատ ուրախացայ, իմա-
նալով որ քահանաների փոփոխութիւնը յանձ-
նվել է աշխարհականաց: Աւրախ ուրախ մօտե-
ցայ նոր կարգված քահանայի հետ ծանօթանալու,
կարծեցով որ սա աւելի հասկացող կը լինի
քան թէ առաջինը, որովհետեւ հոգաբարձու-
թիւնն է կարգել և անշուշտ լաւ կը լինի,
բայց ափսոս, նրա վարմունքից և խօսակցու-
թիւնից իսկոյն երևաց որ նա գիւղացի է և
ագէտ: Պէտք է ասած որ շատ ցաւեցի...

— Զանկալի էր որ քահանայից փոփոխու-
թեան իրաւունքը հոգաբարձութեան ձեռքին
լինէր, բայց, քանի որ այդպիսի քաղաքա-
կանութեամբ պէտք է գործէ՝ աւելի լաւ
կը լինէր, թողնէր դարձեալ կոնսիստօրի
կարգադրութեանը, որովհետեւ ինչպէս լսում
ենք կոնսիստօրը փոխել է իր ուղղութիւնը
նոր անդամօրը շնորհիւ և կամենում է տգէտ
քահանաներին բոլորովին հեռացնել թէւէթի
նման նշանաւոր ունեւորներէն և արժանա-
ւորներին կարգել:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐԻՆ

Պարս 27 ապրիլի

Վորին գերազանցութիւն Ազգայնական Գեներալը
ներկայ տարւոյս յունվար 27 ամսանիւն նամա-
կով ուղարկեց մեզ 1200 բուրլի փող Մօսկուայի
հայ ժողովուրդից ստացած, բաժանելու մեր
այդ քաղաք քրիստոնէից, որք յետին ժամանակումս
ընտանեօր գուրս էին եկած Լաւրիտից և
Լաւրիտից: Տաւապետը խնամատար նորին
բարձր գերազանցութեան այս մարդասիրական
կամք ճշգրտեցի որ գործ գնելու համար,
պարտքը եղաւ ինձ նախ Վարսի նահանգի մէջ
եղող գաղթականաց ցուցակ պատրաստել նա-
հանգի գործակալ քահանայից ձեռքով, իւրա-
քանչիւր գերազանցութեան մարդասիրական
համար: Սեղ հասած ցուցակներէն յայտնուե-
ցաւ որ Կարուց նահանգի մէջ ընդամեն 342
տուն գաղթական կան, ութ տուն յոյներ ևս ի
միասին առնելով. որոց ամենու մէջ կը գտնուին
1466 արու և 1320 էգ անձներ, ամբողջ
2786 անձ: Վարսի շրջալի 1200 բուրլի ամբողջ
գումարին վրա բաժանելով՝ մարդ գլուխ 43
կօպէկ բաժին հասաւ, որոյ համար և սկսեցի
բաժանել:

Տաւապետներէն հաղարաւոր բերաններ այն
առաքինասէր աւագ մարդոյ նախաձեռնի կենաց
օրհնութիւններ կարգացին, ընդ որս և աղօթա-
բար է յաւիտեան:

Լաւրիտից Կարուց Գրիգորիոս Վ. Լաւրա-
նեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐԻՆ

Թիֆլիս, 28 ապրիլի

«Մշակի» մէջ յաջորդաբար հրատարակող
հաճախանից եկած յօդուածները առանձին
աղբեցութիւն են անում. այդ երեւում է այն
ձեւով համակրութեանց, որ ցոյց են տալիս զա-
նազան կողմերի հայերը իրանց համադրայինների
մտաւոր շարժման գործին:

Լաւրիտի յօդուածներից համարեալ իւրաքան-
չիւրի մէջ ընթերցողը հանդիպում է նոր, ան-
սպասելի մի տեղեկութեան: Լաւր տեղեկութիւն-
ներից աւելի շատը վերաբերում է նորածնունդ
ընկերութիւններին (մեծ մասով ուսումնարանա-
կան), որոնց թիւը, եթէ հաշուել լինենք, 30,
40-ից գուցէ կանցնի: Կիւրիկեան, Հայկազեան,
Ուրբեխեան...

Լաւր ընկերութիւնները այնքան հեշտ և այն-
քան շուտ են ծրագրում, կազմակերպում,
կենսւք և գործունէութիւն ստանում, որ մարդ-
քիւն է մնում այդ բանը հրաշք համարի:

Սենք կազմակերպում ենք մեր միւս գրաւոր-
ներին նման ամբողջ մի ժողովուրդի բնաւորու-
թիւնը մի բաղով բացատրել. մենք հեռու ենք
մեր տաճկաստանցի աղգայինների եռանդը «ման-
կական ոգևորութիւն» թարգմանել: Եւ որանց
շարժումը անշուշտ օսմանեան տեղութեան այժ-
մեան պա հպանդակ ան ընթացքի արգա-
սիքն է, ուր դարեւոր ճնշված հայր առաձկա-
նված, որպէս ակնատես իր թշուառ հայրե-
նիքի աւերմունքներին, բարոյական կենսաւոր-
ութիւն է գրում, աշխատելով դուրս գալ ուսում-
նասուր գէնքի շնորհով դարեւոր ստրկութենից:
Լաւր պատճառով տաճկահայերի շարժումը կա-
րել է իրանց փրկութեան աւետիս համարել,
հաւատացած լինելով, որ հոգեվարքում գտնվող
ազգերի յարութիւնը ընկերական ոգին է:

Բայց ինչ.

Սի ընկերութիւն, որքան նա յարատեւ է և
հաստատ հոգի վրա հիմնված, նոյնքան էլ ար-
դիւնաբեր է. և ընդհանրապէս նա նոյնքան
ապարդիւն է ու անյոյս, որքան եթէ նա ան-
հաստատ է և կարճակեց:

Բաւական չէ որ հատ ու կտոր օրէնքներ
ծրագրելով 50, 60 անգամով մի ընկերութիւն
կազմենք ու նրա ժողովների նստերը շքեղ հան-
դէսներով գոցենք—բանաւք. դրանք ընկերու-
թիւններ չեն, այլ ժամանակաւոր հայրենասէրնե-
րի այսօր կամ վաղը առկայծող ճրագի նման գու-
ցէ խմբակներ, որոնք աստ ու անդ կանհետանան:

Լաւր բաղբին կարճաճանայ ամեն մի ընկերու-
թիւն, եթէ նորա հիմնական գաղափարը հազա-
րաւոր օրտերի մէջ չէ տարբացել և եթէ նա
իր ուսումնասիրված և որոշ օրէնքներով չունի
բերաւոր համակրողներ ու հետևողներ: Տեղեց
վերկենողը մի ընկերութիւն հիմնել—գործնով
«ընկերութեան» բանի բարձր նշանակութիւնը
ամենքի տալով կոչնչանայ, այնուհետև ոչ ոք
այդ ընկերութիւններից դրական օգուտ չը տես-
նելով ամեն մարդ. կը հովանայ անգամակցելու
միւս ընկերութիւններին էլ:

Սիւս կողմից ո՞վ երաշխաւոր կը լինի թէ
այդ բաղմամբ ընկերութիւնների մէջ վաղը—
միւս օր մի կուի չի ծագի, կամ հէնց արտաքին
յուզմունք չը գոյանայ, որով գուցէ ջնջվեն
ամենք միասին: Հէնց ինքը լուսաւորութեան
թիւնով տաճիկը կը շտապեցնի այդ կործանու-
մը, իսկ վերջում, եթէ նորա գրութիւնը փոխ-
վեց, նա գուցէ կարգել էլ բոլորը...

Լաւր առաջ ունենալով այդ ամենը մենք հե-
տևանում ենք, որ Տաճկաստանի հայերին մը-
նում է այժմից հոգ տանել այդ բաղմամբ
մանք ու մուրք ընկերութիւնների միաւորութեան
մասին:

Բնկերական գործը բաժանականութեան մէջ
ապագայ չունի:

Յիշած ընկերութիւնների մէջ «Լաւրատեա-
ն» քիւն է շատ ընդարձակ նշանակութիւն է
ստացել թէ իր անդամների բաղմունքամբ և
թէ նրկական ապահովութեամբ: «Լաւրա-
տեան» ընկերութիւնը կարող էր ամբողջ իր
մէջ միւս մնացած ընկերութիւնները, որով ոչ
միայն հասած կը լինէր իր կոչմանը, ոչ միայն
հասկացած կը լինէր շատերին ընկերութեան
նշանակութիւնը, վերջապէս ոչ միայն ջնջած կը
լինէր ապագայում ծագելիք խռովութիւնները
ու ներքին կռիւներ, այլ և որպէս զօրաւոր
գլուխ ու կենտրոն կարող էր օրինաւոր կերպով
դիմագրել հէնց նոյն իսկ տաճկական յարձակ-
մունքներին այդ ընկերութիւնների և իր գլու-
թեան և պաշտպանութեան մէջ:

3 միլիոն ժողովուրդի մէջ 20, 30 ընկերութիւն
պահպանելու համար հարկաւոր է ընդհանուր
պատրաստականութիւն. ընդհանուր ինքնաձեռնա-
շուքիւն: Սենք, տաճկաստանցիքս, դեռ այդ
աստիճանին չենք հասել իսկ եթէ վաղը միւս
օր մեր 20, 30 ընկերութիւնով աւելի զաւմ-
ղալներ յարուցանենք քան օգուտ ստանանք,
ապա իրաւունք չի ունենայ տաճիկը խելու մեր
բոլոր իրաւունքները:

Գործը այդպէս չը հասցրած «Լաւրատեան»
ընկերութիւնը պէտք է շտապի մայր գանալու
և պատվար ու պարիսպ ոչ միայն կողմնակի
յարձակմունքներին, այլ և արդարացող հայի

ընկերական ոգու ոյժը օտարների առջև:

Եւ չը պէտք է թողնէ որ մենք մեր 20,
30 ընկերութիւններով խայտառակ լինենք
օտարների աչքում:

Լաւր մասին վաղօրօք թող մտածեն նորանք,
որոնք պարտաւոր են:

Գ. Պ.

ՆՆՐԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրախութեամբ յայտնում ենք մեր ընկեր-
յոջներին, որ այսուհետև մենք կունենանք
մի մշտական թղթակից ԵՐԶՐԱՆՍԻ մէջ:

Մեզ հաղորդում են ՆՈՐՆԱԽԱՅԵՆԱՆԻՑ,
որ այնտեղի եկեղեցիների տիրացուների վե-
ճակը շատ աննորմաձէլ է: Շատերը նրան-
ցից օրական հացի կարօտ են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Ինչ մեծ գանազանութիւն է նկատվում,
երբ մարդ ուշադրութիւն է դարձնում դե-
մանական ներքին աւօրեայ կենսի ներկայ և
անցեալ դրութեան վրա. և այդ անցեալը
շատ հեռու չէ. պատմական կէտից նայելով,
այդ անցեալին երէկ կարելի է անուանել
ուրեմն որքան մեծ տարբերութիւն երէկվայ
և այսօրվայ մէջ. պէտք խոստովանած այդ
տարբերութիւնը ահալին է. երէկ ամբողջ
Գերմանիան եռանդուն յուզմունքների մէջ էր,
սրճարմանների հրապարակների, և զանազան
հասարակական ժողովների մէջ կենսիւք եռ-
էր գալի. լրագիրների ահալին թերթերը
լքցված էին հետաքրքիր տեղեկութիւններով
ժողովուրդը առում, խօսում, վիճում էր. մի
խաբով ամեն տեղ, որ կողմ որ դառնայիր
միշտ մի բան կար առնուլ, կամ մի բան լու-
լու. մի առ ժամանակ նոյն իսկ օտար լրա-
գիրներն էլ սաստիկ ինքզնիք գրադրած էին
գերմանական լուրերով:

Նրէկը միմեկից, լրագրաւ այսօր. տեսա-
րանը յանկարծ փոխվեց: Ամեն տեղ տիրել
է մի խոր լուռութիւն, հիմա ամեն մէկը
զբաղված է իր սեփական գործերով, երկրա-
գործը իր երկիրն է վարում, վաճառականը
իր առուտուրն է անում, պաշտօնատարը իր
պաշտօնն է վարում. ճշմարիտը ասած մենք
սիրում ենք գերմանացիներին, այս ձևով տես-
նել, որովհետև դրանք այսօր իրանց սեփա-
կան դերի մէջն են, և բացի այդ, մենք սովոր
ենք գերմանացիներին այդ պաշարելու և հաշ-
ված ճանապարհի մէջ տեսնել. ասում են
գերմանացիներ իրարից. քայլերով է առաջ դը-
նում, բայց այդ քայլերը ամեն նախատեսու-
թեամբ հաշված են, և ճշմարիտն այն է, որ
այդ քայլերից յետոյ նրանք միշտ մի որոշեալ
տեղ են հասել, ուրեմն նրանք մի գործ են
կատարել...

Ինչպէս ասացինք վերջին ժամանակներս
Գերմանիայում մի այնպիսի աչքի ընկնող բան
չէ պատահել, միակ բանը, որի մասին այն-
քան վիճաբանութիւններ եղան, դա Գերմա-
նիայի և Աւստրիայի մէջ եղած առևտրական
յարաբերութիւնների հարցն էր: Պարամեն-
տում շուտով կը քննվի մի սաստիկ կարևոր
սահմանադրական հարց:

Մայիսի 1-ին կայացաւ Բերլինի գեղարուես-
տական հանդէսը. Հանդիսին ներկայ էին
Մէյրախ, Յալի, Խուլենբուրգ և Յրիլենստալ
միլիարդները, բացի այդ ահալին բազմու-
թեան մէջ նկատվում էին Յօրկէնբէկ և քա-
ղաքային խորհրդարանի բազմութիւն անդամ-
ներ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լրագիրներին հաղորդում են Կ. Պոլսից,
որ թիւրքաց միլիարդութեան խորհրդի մէջ,
որ կայացաւ մայիսի 1-ին, ընդունվեցաւ Կ.
Պոլսում դեսպանների կոնֆերենցիա կազմելու
միտքը, թէ և Կարաթէօօրօրի-փաշան ընդդէմ
է այդ կոնֆերենցիային, ասելով որ նա քնա-
սաբեր հետեւանքներ կունենայ Թիւրքիայի
համար: Կոնֆերենցիան նպատակ կունենայ
քննել յունական սահմանների որոշելու խն-
դիրը:

— «Republique Francaise» լրագիրը հա-
ղորդում է որ 15 հոգի դատաւարական կօ-
միտիսաններից փախան Նոր-Վալէ-դժնիայից և
մի նաւակի մէջ հասան Կիւսլէնդի ափերին:

— Վաշինգտոնից հեռագրում են, որ Հիւ-
սիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների
հանրապետութեան Կոնգրէսը (պարլամենտը)
ընդունեց ուսմանականների առաջարկու-
թիւնը, որ զօրքերին արգելվում է ներկայ
գտնվել այն տեղերում, որտեղ հանրապետու-
թեան նախագահի ընտրութեան համար
քուէարկութիւն է լինում:

— Յրանսիական հանրապետութեան նախա-
գահը ամիս 26-ին մի նոր հրովարտակ
հրատարակեց «Journal officiel» լրագրի մէջ,
որի զօրութեամբ թողութիւն է արվում դար-
ձեալ 307 մարդոց, որոնք դատաւարական
էին 1871 թիւի ապստամբութեան առիթով:

— «Répub. Franc.» լրագիրը ասում է,
որ հելլենական հարցի վերաբերութեամբ
պետութիւնները կատարեալ եղբայրացութեան
հասան: Շատ հաւանական է, որ այդ հարցի
վերաբերութեամբ Կ. Պոլսում մի դեսպանա-
ւորով կը կայանայ:

— Վիեննայում կայքը ներկայ է գտնվել
միլիարդների խորհրդի նստին: Ժողովը երեք
ժամ տևեց, որից յետոյ ունգարական միլիտ-
արները Պեշտ վերադարձան:

— Իտալական «Bersagliere» լրագիրը յայտ-
նում է, որ հաստատ արդիւններից տեղեկա-
ցել է, թէ այն լուրը, իբր Նիւ-Իօրկից մի
բեռնաւորված նաւ զենքեր է բերում Գարի-
բալդիի համար, սուտ է:

— Աւելի քան 600 մահմետական բնտանիք-
ներ Բանիայում և Հերցեգովինայում խնդրեց
ներկայացրին թիւրքաց Սուլթանին, խնդրե-
լով որ նրանց համար հօրեր նշանակվեն Թիւր-
քիայում, որովհետև չեն կամենում մնալ օ-
տար տիրապետութեան տակ: Թիւրքաց ահ-
րութիւնը դեռ որոշ պատասխան տուած չէ
խնդրատուներին:

— Մայիսի 1-ին Ալէքս. փաշան Վիեննա-
յից ուղևորվեց դէպի Կ. Պոլիս:

ՄԵՍԱԿԻ ԶԵՈՒԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՆԵՐՑ

1879-ի, 1/12 մայիսի: Բիւ-Թանէյրօից
հաղորդում են, որ ուսաց գաղթականները
շարունակում են հայրենիք վերադառնալ. 400
ուսանող եկան Բիւ-Թանէյրօ քաղաքից. 700
մարդիկ էլ սպասում են, որ պաշարը Պարա-
նօ տանեն:

ԻՐԻՑ, 1 մայիսի: Նրկոյան երկրորդ ան-
գամ հրդեհ յայտնվեց, որը ոչնչացրեց քա-
ղաքի չորս ամենաաղքատ թաղերը:

ՕՐԷՆԲՈՒՐԳ, 2 մայիսի: Նոր հրդեհը ոչն-
չացրեց հին արուարձանի մի նշանաւոր մասը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի: Պետրոպոլ-
լիական ամբողջ թնդանօթի ողջոյնը յայտ-
նեց, որ մեծ իշխանուհի Մարիա Պալովնա
յաճողութեամբ աղապից երկունքից: Մեծ
Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչ երէկ ուղե-
ւորվեց դէպի Լիվադիա: Մարիա Պալովնայի
նորածին մանուկը Անդրէյ անուանվեց:

ՊԷՐՄ, 3 մայիսի: Ուրալեան երկաթու-
ղու Բիսէրի կոչված կայարանի շոգեկաւքերի
շտեմարանում հրդեհ յայտնվեց. շէքը և
5 շոգեկաւքեր կրակին զոհ գնացին:

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՈՒՆԻ

